ՀՀ Արագածոտնի մարզի <<Կանչի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենությունը հայտարարում է մրցույթ՝ պատմության (5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

ՈՒսուցչի թափուր աշխատատեղերի համար մրցույթին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափսի
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
3.Անձը հաստատող փաստաթուղթ
4. <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
5.Ինքնակենսագրություն (Ձև 5)
6.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
8.Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
9.Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
10.Հաստստությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում):
11.՝« Հանրակրթության մասին՝» օրենքի26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի □առկայության դեպքում նաև՝ 2-րդ կետի□ պահանջվող համապատասխան փաստաթուղթ
12. .՝« Հանրակրթության մասին՝» օրենքի26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝բարձրագույ ուսումնական հաստատությունից:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են 2025թ. սեպտեմբերի 19-ից մինչև հոկտեմբերի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա 2025թ. հոկտեմբերի 9 -ին՝ ժամը 13:00-ին, Կանչի հիմնական դպրոցում. հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ,Արևուտ համայնք, Կանչ բնակավայր, 5-րդ փողոց, 2-րդ փակուղի,շենք՝ 2:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ 094 – 44 – 35 - 22 հեռախոսահամարով: